ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. մարտի 27-ից 30-ը Կալիֆորնիա (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Էրիկ Գրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Կալիֆորնիա (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)

   2018թ. մարտի 27-ից 30-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Կալիֆորնիայի Սթենֆորդ համալսարան

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն «Ստենֆորդի կառավարման համակարգի փոխակերման վերաբերյալ» երկօրյա գիտաժողովին:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Հանդիպումների ընթացքում քննարկվել են համակարգերի փոխակերման ընթացքում որոշումների ընդունման գործընթացները, կառավարման համակարգերի երկարաժամկետ զարգացումները, որոշումների կայացման ընթացքում թիրախների և շահառուների գնահատման և արդյունքների հստակեցման ուղղությունները:

   Մասնակիցներին ներկայացվել է խնդիրների վերհանման և լուծման գծային և անուղղակի կապերը, էկոհամակարգերի աշխատանքների արդյունավետության չափման ուղենիշները:

Քննարկման առարկա է դարձել միջազգային դրամաշնորհային ծրագրերի գնահատման համար ճիշտ թիրախների և չափորոշիչների ընտրության խնդիրները:

7. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Այցի շրջանակներում հանդիպումներ եմ ունեցել Տեսլա, Գո-Պրո, Փի-Դաբլյու-Սի, Փեյ-փալ, Գուգլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, քննարկվել է ամերիկյան խոշոր կորպորացիաների կողմից կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում բնապահպանության ոլորտում իրականացվող ծրագրերին Հայաստանի մասնակցության հնարավորությունները՝ շեշտադրելով Հայաստանի կենսաբազմազանության կարևորությունը գլոբալ մակարդակով:

ՀՀ բնապահպանության

նախարարի առաջին տեղակալ՝

Է.Գրիգորյան